

1938

569

Ա. Ա.

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՆՏՊԱՆԱԿԱՆ ԿՈՒԻՆԵՐ
(ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿՈՄՍՅԵ ԽՍԶԻ)

Հրատ. «ՀԱՅԱՍՏԱՆ»Ի

ՍՕՖԻՍ, — 1915

9(47.925)
Ա - 58

9(47.925)

Ա-58

ՊՐԱԿ Ա.

2012

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈՒԻՆԵՐԸ

1914 ՆՈՅ. 3-ԻՑ—ԴԵԿՏ. 2.



Հրատ. «ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի

ՍՕՖԻԱ

1915

~~Handwritten scribble~~


Ֆ 2004

1918
1918
1918

78 113-4.2:



859-77



ԿՈՒԻՆԵՐ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐ ԽՄԲԵՐԻ

Հայ կամաւոր խմբերը բաւական ժամանակ է, որ գործի մէջ են գտնուում եւ արդէն կարողացել են կատարել մի շարք գործեր, որոնք հիացում են առաջ բերել զինուորական շրջանների մէջ:

Գծբախտաբար մամուլը հնարաւորութիւն չունի խօսելու այդ գործերի մասին, եւ ոչ միայն լայն հասարակութիւնը, այլ եւ գործին մօտիկ կանգնած մարմինները անտեղեակ են մնում: Այդ թերին լըրացնելու համար է ահա, որ հայ կամաւոր խմբերի կարգադրիչ մարմինը, իբրեւ բոլոր խմբերը համախմբող կեդրոնական մարմին, որոշել է մասաւմաս հրատարակել կռւի դաշտից ստացւած տեղեկու-

թիւներնն ու խմբերի կազմակերպման շուրջ եղած նորութիւնները եւ օրը օրին ուղարկել իր մարմիններին: Այդ ձեւով, թերեւս, կարելի կլինի հանրութեան աւելի ծանօթ դարձնել հայ կամաւոր խմբերի գործնէութեանը:

Պատերազմի բեմում չորս կամաւոր խմբեր ունինք: Առաջին խումբը շարժւեց Սալմիստից Անդրանիկի հրամանատարութեան տակ: Երկրորդ խումբը զուրս եկաւ Իզդիրից Գրօի հրամանատարութեան տակ: Երրորդ խումբը՝ Կաղզանից, հրամանատարութեամբ Համազասպի: Եւ չորրորդը՝ Սարազամիչից, հրամանատարին էր Քեօին: Այս անգամ տայիս ենք տեղեկութիւններ Անդրանիկի խմբի մասին:

Խումբը մեկնեց Սայմաստից:

Անդրանիկի խումբը Սայմաստից մեկնել է նոյեմբեր 3-ին: Գունսը բաղկացած էր .. բոսայից . . . ական մարդ, . . . սանխտար, . . . ձիաւոր Անդրանիկի մօտ, . . . օբօլի մարդ. . . օբօլի ձի, .. ձիաւոր ամեն մի խմբի համար. ընդամենը մօտ հոգի: Ժամը տասնը:

մէկ ու կէսին գունդը հաւաքւեց Գիւմանի մօտ, դաշտի վրայ ուր Ասարատականի ուսու բանակի հրամանատար գեներալ Ջէրնօղուբօլը զգացւած մի ճառ խօսեց, հաւաս յայանելով, որ մի նոր արշալոյս է բացուում հայկական երկնակամարի վրայ: Գեներալի ճառը ընդունւեց սգեւորւած «կեցցէ»ներով: Գեներալը իր հիացումը յայանեց գնդի կանոնաւորութեան մասին. եւ մաղթեց յաջողութիւն, որից յետոյ գունդը ճանապարհ ընկաւ:

Առաջին գիշերը գունդը մնաց Քօէհնաչար գիւղում, տների մէջ, բայց տգանների մի մասը ուղարկւեց առաջին դիրքերը պահելու: Այս տեղ առաջին անգամ տգանները գիշերադահութիւն արին, լեռների կատարին, ցուրտ գիշերին, որ նրանք յաջողութեամբ կատարեցին:

Նոյեմբ. 4-ին ցերեկը գունդը հասաւ Դէրիկի մօտ մի բարձրավանդակի վրայ եւ գիշերը անցկացրեց բաց երկնքի տակ: Սոսկալի քամի էր փչում, բայց տգանների սգեւորութիւնը չատ բարձր էր. նրանք քաջութեամբ տարան ամեն զրկանք: Այս տեղ առաջին անգամ ըզ-

գացւեց տաք հազուստեղէնի եւ տաք կերակուրներ պատրաստելու յարմարութեան պէտքը: Գունդը շատ շտապ էր, որ ճանապարհուեց եւ այդ երկու կողմից էլ մեծ պակասութիւններ ունէր:

Դէրիկից խումբը մեկնեց Նոյեմբ. 5-ին առաւօտ եւ հասաւ Աշ- նակ գիւղի բարձունքները, որտեղից երեւում էր Բուրուշ-խորան լեռ- նանցքը, որ բաժանում էր մեզ Տաճկաստանից եւ որ մենք պէտք է գրաւէինք միւս օր: Հեռադիտակներով պարզեց որ թուրքերը գիտէին արդէն մերոնց գալու մասին եւ բռնել էին ամենամուր գիրքերը: Անմիջապէս հրաման տրւեց, որ տղաները գրաւեն իշխող գիրքերը, որ եւ կատարեց կարգապահութեամբ:

Մի ժամ չանցաւ, որ Բուրուշ-խորան գիւղի տակից երեւաց թըշ- նամին, համիտիէի մօտ 14 հարիւրակ եւ մօտ 1200 ասկէր: Մերոնք իսկոյն գրաւեցին մի գիծ մօտ 4 վերտ երկարութեամբ եւ կարեցին թշնամու արշաւը:

Ժամը 1-ին սկսեց տաք կռիւ, որ տեւեց ամբողջ օր ու գիշեր

եւ յաջորդ օր էլ մինչեւ ժամը 2. յատկապէս յամառ յարձակում- ներ էր անում թշնամու ձախ թելը, ուր գործում էին Սեպուհը, Սըմ- բատը եւ Արտաշէսը իրենց խմբերով: Կռիւ ժամանակ տիրում էր կարգ ու կանոն. հրամանները կատարում՝ արագ ու ճշտապահութեամբ: Ոչ մի անգամ չնկատեցին վախի նշաններ: Տղաները կռոււմ էին շատ տաք ու եռանդով: Զարմանալի էր կամաւորների սովորութիւնը: Ամբողջ խումբը պառկած մնաց փորի վրայ, ամբողջ գիշեր ձեան վը- րայ, առանց խարոյկի, հետեւելով թշնամուն, եւ ոչ մի տրստունջ չեղաւ:

Օգնական զօրքերի եւ թնդանօթների հասնելուց յետոյ էլ կռիւը շարունակեց մէկ օր ու կէս, որով ամբողջ կռիւը տեւեց 3 օր, երբ թշնամին սկսեց փախչել: Ռուս զօրքի հրամանատարը աւելի կասկա- ծով էր նայում եւ չուզեց հալածել թշնամուն, որից վերջինս օգտուեց եւ ազատեց իր մնացած ոյժերը թողնելով բաղմամբիւ սպանածներ եւ վիրաւորներ անցնելով լեռնանցքի միւս կողմը: Անդրանիկի պնդումնե- րը թշնամուն հալածելու մասին անցան ապարդիւն:

Նոյեմբ. 9-ին անցաւ Բուրուչ-խորան լեռնանցքը եւ գրաւեց թուրքերի թողած տեղերը: Այսպէս անցաւ զնդի առաջին կռիւլը, որից շատ դո՛ւ մնաց գեներալ Չէրնօղուբօվը: Մեր զունդը դանուեց իր կոչման բարձրութեան վրա:

Բուրուչ-խորանից յետոյ, խումբը 10 օր Հաչգոյում հանգստանալով Նոյեմբեր 18-ին մեկնում է Ղութուր. ուր Բաղի մօտ տեղի է ունենում ճակատամարտը, որ տւում է մինչեւ յաջորդ օրւայ ժամը երկուսը: Մեր ազաները կուռում են հերօաբար, կուչք-կուզքի Ռուս բանակի հետ: Թշնամին չի զիմանում եւ թողնելով թնթանօթներ, ըստ պանուածներ ու գերիներ՝ փախչում է: Մերոնք հայածում են նրան, գրաւում Բաղի, Հարաթել գիւղեր, ուր անում են քրդերից 5000 ոչխար: 19-ի գիշերը Սաթմանիս հայ գիւղի ուէսը նամակ է բերում Անդրանիկին Շէմսէկ, Մյան եւ Թակուրի աշիրաթների շորս բէկերից որոնք անձնատուր են լինում: Բոյորն էլ թրքական բինբաշիներ են, որոնց թուրք կառավարութիւնը տւել էր 500-ական հրացաններ:

20-ին այդ բէկերը յանձնուում են Անդրանիկին որ ուղարկում է նրանց գեներալ Չէրնօղուբօվին: Խումբը շարունակում է իր ճանապարհը եւ 21-ին առանց զիմադրութեան գրաւում է Սարայը: Տեղի քրիստոնեաները այդ ու հացով ընդունում են խմբին եւ մատաղ են մտրթում: 27-ին խումբը գրաւում է Ասուրլին, որի շուրջը տեղի են ունենում տաք կռիւներ եւ աւերում են մի քանի քրդական գիւղեր: 29-ին կռիւ է լինում Մօլլա Հասան-Ղարադէօղ-Ասպատան գծի վրայ. մերոնք մտնում են Ասպատան, բայց երբ արդէն թշնամին փախուտի է զիմում հրաման է գալիս յետ քաշելու: Այստեղ սպանում է Սեւրուհին օգնական Չուլայը, յիսնապետ Եղիան եւ մի ունտէր օֆիցէր ինսարուկտուր: Նոյ. 30-ից մինչեւ Դեկտ. 2-ը խումբը պատրաստում էր նոր յարձակումների, երբ 3-ի գիշերը հրաման եկաւ նահանջելու սրովհետեւ թուրքերը բերել էին նոր զօրքեր եւ սպառնում էին մերոնց թեկուծքը անցնել: Դեկտ. 3-ին Ղօթուր է հասնում, իսկ 4-ին կարգադրութիւն է ստանում առաջ շարժւելու: 4-ին եւ 5-ին լի-

նում են կռիւներ եւ մերոնք գրաւում են Արաթէլ-Բլէջակ գիծը եւ լաւ ջարդ են տալիս թշնամուն:

Նոյ. 13-ին Սալմաստից ճանապարհ էր դրուել Աւետիսի խումբը, որ պիտի միանար Անդրանիկին: Աւետիսը 14-ին հասնում է խանասոր, ուր Ռուս զօրքերի հետ ստիպւած է լինում կռիւ ունենալ Բարդուղիմէոս Առաքեալի վանքի մօտ: Մերոնք, ինչպէս Անդրանիկի բոլոր կռիւներում, լինում են առաջին շարքերում եւ ուժեղ կռիւց յետոյ Գրաւում են վանքը եւ առաջինը վանքն է մտնում Աւետիսի խումբը զանգակների զօղանջով. յետոյ հասնում են Ռուսները: Բաշկալան էլ առաջին գրաւողը մերոնք են լինում. յետոյ հասնում են կազակները: Թշնամին—ուժեղանալով յետ է վերցնում Բաշկալան, իսկ Աւետիսի խումբը գնում միանում է Անդրանիկին: Անդրանիկի կռիւները հիացմունք են առաջ բերել Ռուս հրամանատարների մէջ որոնք նրան ներկայացրել են բարձր պատանշանի եւ ոսկի սուրի, իսկ 121 հոգի կամաւորներ էլ Գէորգեան խաչի: Հակառակ բոլոր

դժւարութիւններին՝ խումբը իր տոկուն ու համարձակ ընթացքով աւելի քան արդարացրել է իր վրայ դրուած յոյսերը:

Մինչեւ Գեկտ. 2 ամբողջ խմբից սպանւում է 12 հոգի եւ վիրաւորում 18: Լինում են նաեւ շատ հիւանդացողներ. որոնց մեծ մասը վերադարձւած է Կովկաս՝ իրենց վայրերը:



Բաշկալէի ու այլ գրաււած, ապա բաց թողած շրջանների ժողովրդի դրութեան մասին ստոյգ տեղեկութիւններ չկան: Բայց հաւանական լուրեր կան, որ Վանի շրջակայքում հայերի գիւղերում ջարդեր կան: Քրդերը մեծ շարժման մէջ են: Բաշկալէի ու Չուխի շրջաններում քրդական ոյժեր են կենդրոնանում: Նրանց թիւը հազարների է հասնում: Ռուսների Հեռանալուց յետոյ Բաշկալէում հայ ազգաբնակիւնը ենթարկւել է քրդերի ու թուրք զօրքերի բռնութիւններին: Կոտորած է եղել: Բաշկալէի 150 տուն հայ բնակչութիւն

նը մեծապէս սուժել է, սպանւածների թիւը 200 են հաշւում: Կոտորածի ու կողոպուտի են ենթարկւել հետեւեալ գիւղերը.— Հերեսան, Առակ, Մալքան, Թաղ, Խառատուն, Էրինգունի եւ Նասպուրան: Գաղթողների ասելով սպանւածների թիւը 300—400-ի է համնում: Սահմանակից շրջանների ժողովուրդը գաղթել է սալմաստ: Գաղթողներու թիւը հասնում 600—700-ի սակայն նոր գաղթականներ են գալիս: Գաղթականների դրուժիւնը շատ ծանր է:

Յայտնի է, որ քրդերը միշտ զինւած են ու թալանի ու կոտորածի տրամադիր: Ճիշտ է նրանց մէջ կան մարդիկ, որ աշխատում են պատասպարել հայերին, կան այնպիսիներն էլ, որոնք միանում են ուռններին, սակայն դրանք սակաւթիւ բացառութիւններ են, այն էլ քիչ վստահելի: Բացարձակ մեծամասնութիւնը թշնամական վերաբերմունք ունին հայի նկատմամբ: Այժմ էլ զլխաւոր ջարդարարները ու թալանջիները քրդերն են: Թէ եւ մի քանի տեղերում յաջողւել է հայերին թշնամուց խլած զէնքերով զինել, բայց դրանք շատ քիչ

են անգէն բազմութեան մէջ: Բաշկալէում եւ ուրիշ տեղերում ոռոսների հեռանալուց յետոյ, կոտորում ու կողոպտում են հայերին: Վանքի կռիւն ուռնների հետ միացած է եղել քիւրա Սմկօն, սակայն նրա մարդիկ կռիւը թողած հայերին են թալանելիս եղել: Ինքը Սըմկօն էլ մի աւազակապետ է: Ռուսների կողմն անցած քրդերից է եւ Աբդուլ-Րըզակ բէյը, որ բայազիդի կողմից է եւ այժմ գտնւում է Խոյում: Նա գանդաւու է մեր խմբապետներին, թէ հայերը նեղում են քիւրդերին: Նրան փառատրով ցոյց է արւում, որ ընդհակառակը քրդերն են զլխաւոր ջարդարարները: Բէկը խնդրել է աշխատել մեզմեկ հայ-քրդական յարաբերութիւնները եւ խօստացել է մի թուլցիկ յայտարարել եւ կոչ անել Մշի, Վանի եւ այլ շրջանների քրդերին չզպչել հայերին:

1938

Նուստի լսյս կը տեսնեն յաջորդ
պրակները:



7013

ԳԻՆ 50 ՍԱՆԹԻՄ

Արտատպելը արգիլուած է

Печатница П. Глушковъ — София. Нишка 33.